ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ-ՏԻԳՐԱՆ ՄԵԾ, ՆԺԴԵՀԻ-ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ԵՎ ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ-ՄՅԱՍՆԻԿԱՅՆ ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ ԼՈՒՍԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-18/65»

ք. Վանաձոր «21» հունիսի 2018թ.

«Վանաձորի համայնքապետարան»-ը, ի դեմս Մ. Ասլանյան-ի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կ և Ա Մոնտաժշին»ՓԲԸ- ն, ի դեմս տնօրեն Ս. Հովհաննիսյան-ի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Վանաձոր համայնքի Մյասնիկյան- Տիգրան Մեծ, Նժդեհի-Տիգրան Մեծ և Գր. Լուսավորիչի-Մյասնիկյան խաչմերուկներում լուսացույցների տեղադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 8900000 (ութ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող

պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Պայմանագիրը կազմված է **12** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Վանաձորի համայնքապետարան»	«Կ և Ա Մոնտաժշին» ՓԲԸ
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22	Ք. Վանաձոր,Վարդանանց 2ա
Կենտրոնական գանձապետարան	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 900232000837	ՀՀ 2050222007241001
ՀՎՀՀ 06901936	ՀՎՀՀ 06907967
Մ. Ասլանյան	Ս. Հովհաննիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«21» հունիսի 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը**
1	45311142	լուսացույցների տեխադրման աշխատանքների տեխնիկական բնութագրերն ու ծավալները- տես ներքևում	դրամ	8900000	8900000	1	Վանաձոր համայնքի Մյասնիկյան-Տիգրան Մեծ, Նժդեհի-Տիգրան Մեծ և Գր. Լուսավորիչի-Մյասնիկյան խաչմերուկներ	21.06.2018-15.07.2018

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Վանաձորի համայնքապետարան»
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900232000837
ՀՎՀՀ 06901936

Մ. Ալանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Կ և Ա Մոնտաժշին» ՓԲԸ
Ք. Վանաձոր,Վարդանանց 2ա
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050222007241001
ՀՎՀՀ 06907967

Ս. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
«21» հունիսի 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Վանաձոր համայնքի Մյասնիկյան- Տիգրան Մեծ, Նժդեհի-Տիգրան Մեծ և Գր. Լուսավորիչի-Մյասնիկյան խաչմերուկներում լուսացույցների տեղադրման աշխատանքների

Ծավալաթերթ

				Հազ. ՀՀ դրամ	
ՀՀ	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
1	3	4	5	6	7
1	3-րդ կարգի բնահողի ձեռքով մետաղական սյուների տեղադրման համար	մ^3	1,20	4,502	5,4
2	2-րդ կարգի բնահողի հետլիցք ձեռքով	մ^3	0,05	1,01	0,1
3	Ավելորդ բնահողի փռում տեղում ձեռքով	մ^3	1,15	1,01	1,2
4	Մետաղական խողովակից սյուների տեղադրում Φ80	տն	0,189	59,989	11,3
5	մետաղական խողովակ Φ80x4 /L=3.5մ, 8հատ/	մ	28,00	3,949	110,6
6	Ամրան Φ12A500c	տն	0,002	363,44	0,7
7	պողպ.թերթ b=10մմ	տն	0,0015	569,681	0,9
8	Մետաղական սյուների յուղաներկում 2 անգամ	մ^2	6,030	1,189	7,2
9	Մետաղական սյուների բետոնե հիմքի կառուցում Վ7.5	մ^3	1,150	49,45	56,9
10	Գոյություն ունեցող տրանսպորտային լուսացույցերի ապամոնտաժում	լրակազմ	16,00	13,351	213,6
11	Լուսացույցերի տեղադրում և ծրագրավորում	լրակազմ	32,00	11,129	356,1
12	Տրանսպորտային, լուսադիոդային, հետհաշվարկային ժամացույցով լուսացույց, այդ թվում լրակազմի մեջ մտնող նյութեր և սարքավորումներ.	լրակազմ	16,00	258,68	4138,9
	Ղեկավարող սարք /մեկ խաչմերուկի համար/	1 հատ			
	Ձայնային ազդանշանային համակարգ /մեկ խաչմերուկի համար/	8 հատ			
	Մալուխ հոսանքի /մեկ խաչմերուկի համար/	120մ			
	Մալուխ ինֆորմացիոն /մեկ խաչմերուկի համար/	240 մ			
	ՀԵՆՔ /KAPKAC/				
	Մետաղական ժապավեն 50x3մմ	48 մ			
	Մետաղական ժապավեն 20x2մմ	32 մ			
	Մետաղական ժապավեն 18x2մմ	48 մ			
	Մետաղական անկյունակ 18x18մմ	48 մ			
	Ալյումինե անկյունակ 20x10մմ	48 մ			
	Մետաղական թիթեղ 0.5մմ	5.12 մ			
	Օրգանական ապակի 4մմ	5.6 մ^2			

	Օրգանական ապակի սպիտակ թափանցիկ 8մմ	4.8 մ^2			
	ՊՎՔ սև 6մմ	5.92 մ^2			
	Հեղյուս 4մմ	384 հատ			
	Ամրացման հարմարանք	32 հատ			
	Ինքնակպչող ռետինե մեկուսիչ	48 մ			
	Սիլիկոն	16 տուփ			
	Ներկ հակակոռոզիոն	16 տուփ			
	Հարթեցնող մածիկ /замазка/	8 տուփ			
	Սոսինձ դիքլորէթան	1 տուփ			
	ԼՈՒՍԱՅԻՆ ԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ				
	Տպագրած հարթակ 2մմ (3 հատ 3x3դմ)	432 դմ. քառ			
	Լուսադիոդ կարմիր	5120 հատ			
	Լուսադիոդ դեղին	2400 հատ			
	Լուսադիոդ կանաչ	4320 հատ			
	Սխեմանջր	48 հատ			
	Սնուցման բլոկ	16 հատ			
	Միացման մալուխ և լրացուցիչ պարագաներ				
	ՇԱԽՍԿՈՂ ՆՅՈՒԹԵՐ				
	Էլեկտրաեռակցման էլեկտրոդ 3մմ	160 հատ			
	Կտրող շրջան	48 հատ			
	Հղկող շրջան	32 հատ			
	Լուսադիոդների ամրացում	11848 հատ			
13	Հետիոտնային, լուսադիոդային, հետհաշվարկային ժամացույցով լուսացույց, այդ թվում լրակազմի մեջ մտնող նյութեր և սարքավորումներ.	լրա - կազմ	16,00	105,697	1691,2
	ՀԵՆՔ /KAPKAC/				
	Մետաղական ժապավեն 50x3մմ	24 մ			
	Մետաղական ժապավեն 20x2մմ	1.6 մ			
	Մետաղական ժապավեն 18x2մմ	24 մ			
	Մետաղական խողովակ քառակուսի 10x10մմ	24 մ			
	Մետաղական անկյունակ 18x18մմ	11.2 մ			
	Ալյումինե անկյունակ 20x10մմ	24 մ			
	Մետաղական թիթեղ 0.5մմ	2.4 մ			
	Օրգանական ապակի 4մմ	1.8 մ^2			
	ՊՎՔ սև 6մմ	1.8 մ^2			
	Հեղյուս 4մմ	192 հատ			
	Ամրացման հարմարանք	32 հատ			
	Ինքնակպչող ռետինե մեկուսիչ	24 մ			
	Սիլիկոն	16 տուփ			
	Ներկ հակակոռոզիոն	16 տուփ			
	Հարթեցնող մածիկ /замазка/	8 տուփ			
	ԼՈՒՍԱՅԻՆ ԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ				
	Տպագրած հարթակ 2մմ (2x4դմ)	128 դմ. քառ			
	Լուսադիոդ կարմիր	3200 հատ			

	Լուսադիոդ դեղին	1600 հատ			
	Լուսադիոդ կանաչ	3200 հատ			
	Սխեմաներ	հատ			
	Միացման մալուխ և լրացուցիչ պարագաներ				
	ԾԱԽՍԿՈՂ ՆՅՈՒԹԵՐ				
	էլեկտրաեռակցման էլեկտրոդ 3մմ	80 հատ			
	Կտրող շրջան	32 հատ			
	Հղկող շրջան	16 հատ			
	Լուսադիոդների ամրացում	8000 հատ			
14	Թվային ժամանակացույցով LED լուսացույցի տեղադրում /երկկողմանի/, գոյություն ունեցող սյուների վրա	լրակազմ	2,00	241,434	482,9
	Ընդամենը				7076,8
	Վերադիր ծախս 13,3%				941,2
	Ընդամենը				8018,0
	Շահույթ 11%				882,0
	Ընդհանուրը				8900,0

Լուսացույցների

Տեխնիկական բնութագիր

1. Լուսացույց տրանսպորտային, լուսադիոդային,հետհաշվարկի ժամանակացույցով
Տրանսպորտային լուսացույցը բաղկացած է 3 լուսատուներից,կանաչ ,կարմիր և դեղին գույների լուսավորությամբ, որոնցում որպես լույսի աղբյուր օգտագործված են գերպայծառ լուսադիոդներ:
Տրանսպորտային լուսացույցը հարթ մակերեսներով կոնստրուկցիա է, որի

մարմինը պատրաստված է մետաղական միակտոր կարկասից և պոլիմերային հարթություններից:Այն սև է, երեսի հարթության ալյումինե անկյունակների եզրագծերով:

Մետաղական կարկասը պատված է հակակորոզիոն ներկով:

Ելքային բացվածքները պատրաստված են 8 մմ հաստության, թափանցիկ, չներկած օրգանական ապակուց:
Լուսացույցում ներկառուցված է կանաչ և կարմիր լուսային ազդանշանների հետհաշվարկի ժամանակացույց (համապատասխանաբար կանաչ և կարմիր գույներով):
Լուսացույցը համալրված է մետաղական ամրակներով,ինչը հնարավորություն է տալիս տեղադրել այն ուղղաձիգ հենասյան վրա և կարգավորել լուսացույցը հորիզոնական և ուղղաձիգ հարթություններում:
Լուսացույցը ղեկավարվում է թվային միկրոկոնտրոլլերով:
Տրանսպորտային լուսացույցի պարամետրները

Ազդանշանի ելքային բացվացքի (aperture) տրամագիծը		300 մմ
Լուսացույցի ազդանշանի լույսի առանցքային ուժը	Կարմիր Դեղին Կանաչ	Ոչ պակաս 400 կդ Ոչ պակաս 300 կդ Ոչ պակաս 300 կդ
Սպառման հզորությունը	Կարմիր Դեղին Կանաչ	Ոչ ավելի 18 վտ Ոչ ավելի 12 վտ Ոչ ավելի 15 վտ
Սնուցման լարումը		185 – 240 վոլտ
Հետհաշվարկի ժամանակացույցի միջակայքը		99 – 1 վրկ
Հետհաշվարկի քայլը		1 վրկ
Դեղին ազդանշանի աշխատանքային ռեժիմները		Հիմնական / վթարային
Աշխատանքային ջերմաստիճանների միջակայքը		-40° – ից մինչև +70° C
Ընդհանուր չափերը		Ոչ ավելի 106.6 x 33.6 x 5.1 սմ

Երաշխիքային շահագործման ժամկետը	Մեկ (1) տարի
Շահագործման ժամկետը	Տաս (10) տարի

2. Լուսացույց հետիոտնային, լուսադիոդային,հետհաշվարկի ժամանակացույցով
Հետիոտնային լուսացույցը բաղկացած է լուսատու 1 հարթությունից, որում որպես լույսի աղբյուր օգտագործված են գերպայծառ լուսադիոդներ:
Հետիոտնային լուսացույցը հարթ մակերեսներով կոնստրուկցիա է, որի մարմինը պատրաստված է մետաղական միակտոր կարկասից և պոլիմերային հարթություններից:Այն սև է,երեսի հարթության ալյումինե անկյունակների եզրագծերով:
Մետաղական կարկասը պատված է հակակորոզիոն ներկով:

Ելքային բացվածքը պատրաստված է 4 մմ հաստության, թափանցիկ, չներկած օրգանական ապակուց:
Հետիոտնային լուսացույցի կարմիր ազդանշանը սպասող հետիոտնի ուրվագիծ է, իսկ կանաչ ազդանշանը քայլող հետիոտնի ուրվագիծ (անիմացիա):
Լուսացույցում ներկառուցված է կանաչ և կարմիր լուսային ազդանշանների հետհաշվարկի ժամանակացույց (համապատասխանաբար կանաչ և կարմիր գույներով):
Հետիոտնային լուսացույցը համալրված է կանաչ ազդանշանի համար նախատեսված ձայնային ազդանշանային համակարգով:
Լուսացույցը համալրված է մետաղական ամրակներով,ինչը հնարավորություն է տալիս տեղադրել այն ուղղաձիգ հենասյան վրա և կարգավորել լուսացույցը հորիզոնական և ուղղաձիգ հարթություններում:
Լուսացույցը ղեկավարվում է թվային միկրոկոնտրոլլերով:
Հետիոտնային լուսացույցի պարամետրները

Ազդանշանի ելքային բացվացքի (апертура) չափերը		200 x 400 մմ
Լուսացույցի ազդանշանի լույսի առանցքային ուժը	Կարմիր Կանաչ	Ոչ պակաս 260 կդ Ոչ պակաս 210 կդ
Սպառման հզորությունը	Կարմիր Կանաչ	Ոչ ավելի 9 վտ Ոչ ավելի 9 վտ
Սնուցման լարումը		185 – 240 վոլտ
Հետհաշվարկի ժամանակացույցի միջակայքը		99 – 1 վրկ
Հետհաշվարկի քայլը		1 վրկ
Աշխատանքային ջերմաստիճանների միջակայքը		-40° – ից մինչև +70° C
Ընդհանուր չափերը		Ոչ ավելի 45.6 x 25.6 x 5.1 սմ
Երաշխիքային շահագործման ժամկետը		Մեկ (1) տարի
Շահագործման ժամկետը		Տաս (10) տարի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Վանաձորի համայնքապետարան»
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձնապետարան
Հ/Հ 900232000837
ՀՎՀՀ 06901936

Մ. Ասլանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Կ և Ա Մոնտաժշին» ՓԲԸ
Ք. Վանաձոր,Վարդանանց 2ա
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050222007241001
ՀՎՀՀ 06907967

Ս. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«21» հունիսի 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	452311142	Վանաձոր համայնքի Մյասնիկյան-Տիգրան Մեծ, Նժդեհի-Տիգրան Մեծ և Գր. Լուսավորիչի-Մյասնիկյան խաչմերուկներում լուսացույցների տեղադրման աշխատանքներ						4450000	8900000	8900000	8900000	8900000	8900000	8900000	**8900000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Վանաձորի համայնքապետարան»
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900232000837
ՀՎՀՀ 06901936

---------------------------Մ. Ասլանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Կ և Ա Մոնտաժշին» ՓԲԸ
Ք. Վանաձոր,Վարդանանց 2ա
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050222007241001
ՀՎՀՀ 06907967

---------------------------Ա. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«21» հունիսի 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«21» հունիսի 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն